ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

07.05.2013թ.
201-ի 2

ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ
Պարոն Երվանդ Զախարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զախարյան,

2013թ.-ի ապրիլի 18-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով տեղեկություններ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի շինարարության վերաբերյալ: Քաղաքապետարանը խնդրված տեղեկությունների մի մասը՝ Փակ շուկայի նկատմամբ սեփականության կամ փակ շուկայի վարձակալության հիմքերի վերաբերյալ խնդրված տեղեկությունները ստանալու համար հղում է արել ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ե՞րբ, ի՞նչ իրավական ակտով, ու՞մ, ի՞նչ նպատակով, ի՞նչ իրավունքով (սեփականության իրավունքով, վարձակալության իրավունքով) եւ որքա՞ն ժամկետով է հատկացվել Փակ շուկան,
2. Խնդրում ենք տրամադրել Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի հատկացման (սեփականության կամ վարձակալության հիմքերով) պայմանագրի (պայմանագրերի) պատճենը (պատճենները):

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կից ներկայացնում ենք Երեւանի քաղաքապետարանի պատասխան գրության պատճենը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան